

կողմը կրոնէ, իսկ ազնուական մասն՝ քարոզիչինը: Ի՞նչ է ասոնց կողմն պատճառը: Ի՞նչ կրնայ ըլլալ կրօնականներու կողմն պատճառն. կա՛մ իրենց յուսացածին չափ մարդ չմեռնիր եւ կամ հարսանիք ու կնունք չըլլար, որով իրենց *պիւտճէին* հաւասարակշռութիւնը կկորսուի: Միթէ ասոնց *պիւտճէն* հաւասարակշռելու համար ամեն օր մեռնելո՞ւ է, ամեն օր կի՞ն մ'առնելու է, ամեն օր զաւա՞կ ունենալու է: Այո՛, եթէ այս անկարելի է՝ Գերմանիայէն ելմտագէտ մը բերելու է, որ կանոնաւորէ ասոնց *պիւտճէն*:

Այս թաղն ալ ունի երկու վարժարաններ, որոնց մէջ օր մը մեր թոռներու թոռները պիտի կրթուին՝ եթէ պէշկկթաշցին յաջողի մինչեւ նոյն օրը բարեկարգել իւր դաստիարակութեան շէնքերը: Պէշկթաշցին, իւր վարժարանները կանոնաւորելու համար, քսան տարիէ վեր դասատու կփոխէ, հոգաբարձու կփոխէ, գրասեղան կփոխէ, տնտես կը փոխէ, գրիչ կփոխէ, թաղական կփոխէ, գիրք կփոխէ, եւ դարձեալ յաջողիր. թող անգամ մ'ալ դպրոցին աշակերտները փոխէ, տեսնենք ի՞նչպէս կ'ըլլայ. եթէ դարձեալ յուսացած արդիւնքը չտեսնուի՝ այն ատեն հարկ կ'ըլլայ թաղեցոյն փոխել իւր... իւր... լաթե՞րը... ոչ, իւր... գլուխը: Այս թաղին մէջ կրնակի Իւթիւճեան, Մասիսի խմբագրապետը, որ կարող է այդ վարժարաններու տնօրէնութիւնն իւր վրայ առնել եւ թաղին զաւակներուն դաստիարակութեանը աշխատիլ, սակայն կը վախնայ խեղճն, որ ասանկ պաշտօնի մը գլուխ անցնելուն պէս՝ քանի մը ամիսէն իւր տունը պիտի քարկոծեն. Պէշկկթաշցին ասոր փորձը տուած է դժբախտաբար: – Իւթիւճեան այս քարկոծումէն չէր վախնար՝ եթէ Մասիսի եկամուտը ներեր շաբաթը մէկ անգամ նոր ապակիներ անցունել իւր տանը պատուհաններուն:

Մասնաւոր վարժարան մը կայ հոս, որ աշակերտներուն Հայոց պատմութիւն միայն կկարդացունէ: Մէկ դասագիրքը երկու անգամ կկարդացունէ. աշակերտն զայն լմնցնելուն պէս՝ Փափագեանի *Հայոց պատմութիւն* մը կտրուի իրեն. աս ալ երեք անգամ կարդալէն ետքը *Սուրենեանը* կկարդայ. ասոնց կյաջորդէն միւս *Հայոց պատմութիւն*ները, զորս երեքական անգամ կկարդայ իրարու ետեւէ: Աստուած քառասուն տեսակ *Հայոց պատմութիւն* տուած ըլլալով մեզի՝ խեղճ աշակերտները դեռ չկրցին անոնց ամենը կարդալ լմնցնել, որ մենք ալ տեսնէինք, թէ այս դասատուն *Հայոց պատմութիւն* - էն վերջը ի՞նչ դասագիրք պիտի տայ աշակերտներուն: Այս դասատուն, կ'ըսեն, միայն քանի մը հարուստ ծնողներ կհրաւիրէ քննութեան: